ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ. 098-04-80-46

թիվ 03-117

«19» հուլիսի 2012թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 18.07.2012թ. թիվ 17-Ն, 18, 19-Ն, 20-21, 22-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.0253-57-6-82, 098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հուլիսի 2012 թվականի N 17 -Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Թումանյան համայնքի 2012թ. բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(4) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2012թ. հուլիսի 18
ք. Թումանյան

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
18. հուլիսի 2012 թ. թիվ 17 - Ն որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ-ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2012թ –ի երկրորդ եռամսյակի ընթացքում բյուջեն կատարվել է եկամուտների գծով՝ 100.1 %-ով, նախատեսված 13954.0 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 13969.7 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 2413.2 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 2428.9 հազ. դրամ, կատարման տոկոսը՝100.7%: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 11540.8 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 11540.8 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100% :

1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի 2012թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 13954.0 հազ. դրամ եկամուտներ, փաստացի մուտքերը կազմել են 13969.7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.7 %: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 2413.2 հազ. դրամ, կատարվել է փաստացի մուտք 2428.9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.7 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 11540.8 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100%:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2012թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում բյուջեով նախատեսված էր 212.8 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 512.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 240.8 %: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 200.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 118.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 59.5 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 651.4 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 485.4 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը 74.3 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված էր 314.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 336.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 107.1 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նույնպես աճել է :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18»հուլիսի 2012 թվականի N 18

<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ >ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>ՀՀ օրենքի 16 հոդվածի 14 –րդ

և 15-րդ կետերով.

1. Հաստատել <Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծումը;
2. Հաստատել <Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և փոխանցման ակտը:
3. Տալ համաձայնություն Թումանյանի քաղաքապետի օգնական Արման Մոսինյանին <Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ժամանակավոր տնօրեն նշանակելուն:
4. Հանձնարարել Ա.Մոսինյանին <Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության և այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Թումանյանի տարածքային բաժին՝ օրենքով սահմանված կարգով ընկերության կանոնադրությունը գրանցելու համար:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հուլիսի 2012թ. N 19-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի տարածքում 2012 թվականի համար, «Թումանյանի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում սահմանել վարձավճարի հետևյալ դրույքաչափը – 1500 ՀՀ դրամ:

Կողմ(4) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2012թ. հուլիսի 18
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզ Թումանյան համայնք
Կենտրոնական փողոց 1
Հեռ.098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18»հուլիսի 2012 թվականի N 20

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 23.10.2000թվականի <ՀՀ հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին> թիվ 656 որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ Վանաձորի ստորաբաժանման կողմից հաստատված առ 01.07.2012թ. հաշվետվությունը.

Թումանյան համայնքի հողային հաշվեկշիռը 2012 թ. հուլիսի 1-ի դրությամբ

կազմում է 1096,68 հա:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հուլիսի 2012թ. N 21-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյան քաղաքային համայնքի ավագնու՝ 2011թ. դեկտեմբերի 3-ի «Թումանյան համայնքի 2012թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Էմմա Ասատրյանի, Վալենտինա Շահվերդյանի, Ռոբերտ Մխիթարյանի, Աշխեն Արզումանյանի, Նունե Շահվերդյանի և Արփիկ Մելքումյանի, դիմումները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստների բյուջեից (հոդված 4729) Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն.

1) Էմմա Ասատրյան - 20.000 դրամ
2) Վալենտինա Շահվերդյան -20.000 դրամ
3) Ռոբերտ Մխիթարյան -20.000 դրամ
4) Աշխեն Արզումանյան -30.000 դրամ
5) Նունե Շահվերդյան -30.000 դրամ
6) Արփիկ Մելքումյան - 30.000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Արման Մոսինյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ(4) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2012թ. հուլիսի 18
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.0253-57-6-82, 098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» հուլիսի 2012 թվականի N 22-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, ղեկավարվելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով և առաջնորդվելով «Թումանյան համայնքի 2012թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու 17 հունվարի 2012թ-ի թիվ 1-Ն որոշմամբ՝ համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի 2012 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կառավարման ապարատի ծախսերի նախահաշվի ընդհանուր բնույթի այլ ծառայություններից (հոդ. 4239) պակասեցնել 30.0 հազ. դրամ և ավելացնել Տեղեկատվական ծառայություններ (հոդ. 4234) ծախսերին, այն սահմանել 130.0 հազ. դրամ:

2. Պահուստային ֆոնդից պակասեցնել 880.0 հազ. դրամ:

3. Ավելացնել Կրթությանը վերաբերվող ծախսերը 680.0 հազ. դրամով:
Արտադպրոցական դաստիարակության համար բացել ծախսերի նախահաշիվ և 680.0 հազ. դրամը տրամադրել որպես ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերին:

4. Ավելացնել Սոցիալական հատուկ արտադրությունների (հոդ. 4729) համար նախատեսված ծախսերը 200.0 հազ. դրամով, սահմանել այն 700.0 հազ. դրամ:

Կողմ(4) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2012թ. հուլիսի 18
ք. Թումանյան